

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏՈՀՄԱՅԻՆ ԵՐԻՆՁՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<<< ԳՆ-ԲԸԱՊՁԲ-15/02-ԱԱՎ-46 >>

ք.Երևան

« 14 » 10 2015թ.

<< Ըյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Կիրակոսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Լիվեշտոկ ՋիԷմԲիԷյ (Livestock GmbH)», ի դեմս տնօրեն Մարտին Շվանինգերի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական քննազգրով նախատեսված տոհմային երինջներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով

**CONTRACT ON SUPPLY OF TRIBAL
HEIFERS
FOR THE NEEDS OF GOVERNMENT
«ՀՀ ԳՆ-ԲԸԱՊՁԲ-15/02-ԱԱՎ-46»**

Yerevan

13. OCT, 2015
« 14 » 10 2015

The ministry of agriculture of the Republic of Armenia, represented by the Head of the Staff Artashes Kirakosyan acting on the basis of the statute of the Ministry(hereinafter: "Buyer"), on the one side, and «Livestock GmbH» represented by the director Martin Schwabinger(hereinafter: "Seller"), acting on the basis of the statute on the other hand, have concluded the present agreement as follows:

1. Subject of the Contract

1.1 The Seller is obliged to supply the Buyer or the Reciever (hereinafter: Reciever) the tribal heifers (hereinafter: Goods) specified in Appendix N 1 – Technical Specification – in accordance with the procedure, in volumes, purchasing schedule and terms established under the Contract and the Buyer undertakes to accept the Goods and pay for such Goods according to Appendix N 3.

2. Conditions of supply

2.1 The Seller supply the Goods to the Buyer (recipient) in accordance with the procurement schedule stipulated by the volumes and terms specified in Appendix 2 to this Contract.

2.2 The Seller shall deliver Goods to the Buyer, to the address(-es) mentioned by the Buyer.

13 OCT 2015


Ներույ՛:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՛

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՛ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

3. Right and responsibilities of the Parties

3.1 The Buyer shall have the right:

3.1.1 To refuse acceptance of the Goods in case of the Seller's failure to supply them within specified terms, if the terms of supply were violated for more than 30 days.

3.1.2 If the supplied Goods are incompliant with the technical specification under the Clause 1.1 of this Contract:

a) To require a compensation of the expenses made because of the improper quality Goods

b) To refuse acceptance of the Goods and determine reasonable term, at his/her own discretion, for the replacement of goods with the Goods specified hereunder, without paying compensation, as well as require from the Seller the payment of the penalty mentioned in Clause 7.4 of this Contract;

c) To refuse doing this Contract and require to refund the amount paid for the Goods;

3.1.3 If the quantity of supplied Goods are less than the quantity required in the Contract, then

a) to require for completing the shortage of the quantity of Goods supplied.

b) To refuse from the delivered Goods and from the payment for them, and if it was already paid for Goods, then require to refund the amount paid and a penalty mentioned in the Clause 7.2 of this Contract;

13.07.2015


ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները

3.1.4 If the supplied Goods are with breach of type, with his election;

a) To accept the Goods corresponding the type condition and refuse the rest of the Goods;

b) To refuse all Goods, and require a penalty mentioned in Clause 7.2 of this Contract;

c) To require free replacement of the Goods which do not correspond the type condition with Goods corresponding the type determined by the Contract;

3.1.5. If the terms of supply were breached of by the Seller to set new terms for Goods supply at his/her own discretion and require a penalty mentioned in the Clause 7.2 of this Contract from the Seller;


3.1.6 To require from the Seller compensation for the damages in the amount of the difference of the Contract price and the price of conducted transaction, if, within a reasonable term after termination of this Contract on the basis of breach of the Seller's obligation, the Buyer has purchased goods from another person at a higher but reasonable price, as well as require compensation for all reasonable expenses made by the Buyer as a result of purchase of Goods from another person.

3.1.7 To terminate the Contract unilaterally (fully or partially), if the Seller substantially breaches the Contract.

3.1.7.1 The breach of a Contract is considered to be substantially, if;

a) Goods supplied are of improper quality, and replacement of which, within terms acceptable to the Buyer, is impossible;

b) The terms for supply of Goods have been breached for more than 30 days;

13.01.2015


<p>խախտվել են 30 օրից ավելի,</p> <p>3.1.8 Ձևնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:</p> <p>3.2 Գնորդը պարտավոր է՝</p> <p>3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:</p> <p>3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.</p> <p>3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:</p> <p>3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել (փոստի, էլեկտրոնային և այլ կապի միջոցներով) թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինե՛ր՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:</p> <p>3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:</p> <p>3.3 Վաճառողն իրավունք ունի՝</p> <p>3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.</p> <p>3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու</p>	<p>3.1.8 Check the Goods and immediately notify the Seller on the defects detected.</p> <p>3.2 The Buyer is obliged:</p> <p>3.2.1 To perform all the necessary activities that shall ensure acceptance of the Goods according to this Contract.</p> <p>3.2.2 To ensure due maintenance of Goods if acceptance of the Goods supplied by the Seller is refused pursuant to this Contract, and immediately inform the Seller of such refusal.</p> <p>3.2.3 To effect payments in accordance with the procedure and terms specified hereunder, and the fine under Clause 7.5 hereof - in case of breach of the terms for payment.</p> <p>3.2.4 To notify (via post, email and other contact methods) the Seller on breach of the Contract provisions concerning quantity, assortment, quality of the Goods, immediately after detection of a defect or within reasonable terms after it becomes apparent that such breach of the respective Contract provision should have been revealed due to the nature and the importance of Goods.</p> <p>3.2.5 To compensate the damages of the Seller after the Contract solution according to the Clause 3.3.4 of the Contract.</p> <p>3.3 The Seller shall have the right:</p> <p>3.3.1 To require from the Buyer(Reciever) for accepting the Goods supplied pursuant to the procedure and within the terms specified</p>
---	--

11.3.08.2015


վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (ըրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 թ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

hereunder.

3.3.2 To require from the Buyer compensation for the damages in the amount of the difference of the Contract price and the price of conducted transaction, if, within a reasonable term after termination of this Contract on the basis of breach of the Buyer's obligation, the Seller has sold the Goods to another person at a lower but reasonable price.

3.3.3 To require from the Buyer(Receiver) payment of the amounts payable for the supplied Goods pursuant to the procedure and within the terms specified under the Contract.

3.3.4 To terminate the Contract unilaterally (fully or partially), if the Buyer breaches the Contract substantially.

3.3.4.1 The Contract is recognized as breached by the Buyer material, if the terms of the payment for the Goods were breached multiply.

3.3.5 To supply the Goods premature with the agreement of the Buyer(Receiver).

3.4 The Seller shall be obliged:

3.4.1 To deliver Goods to the Buyer(Receiver) pursuant to the procedure and within the terms established hereunder.

3.4.2 To supply the Goods to the Buyer(Receiver) in terms decided advance with the Buyer within Clause 2.2 of this Contract.

3.4.3 To ensure the delivery of Goods corresponding to clause 3.1.2b and clause 3.1.5 of this contract within the terms set by the Buyer.

3.4.4 To deliver to the Buyer(Receiver) Goods free from any rights of the third parties.

3.4.5 To deliver the Buyer(Receiver) Goods

10.01.2015
[Signature]

<p>3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:</p> <p>3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:</p> <p>3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:</p> <p>3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:</p> <p>3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:</p> <p>3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:</p> <p>3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:</p>	<p>according with the quality and quantity determined in Appendix N1 and Appendix N2 of the Contract within the terms established hereunder, and to provide documents on quality of the Goods established under the RA legislation upon receipt of such request by the Buyer(Reciever).</p> <p>3.4.6 To complete lack of supply in case supply is made with lack within the terms established hereunder.</p> <p>3.4.7 To take back the Goods maintained properly by the Buyer(Reciever) corresponding to Clause 3.2.2 of this Contract or to dispose of the Goods within a reasonable term, as well as compensate for the expenses made by the Buyer with respect to due maintenance, realization and returning the Goods to the Seller.</p> <p>3.4.8 To pay a fine and a penalty determined by Clauses 7.2 and 7.4 in cases established in the Contract.</p> <p>3.4.9. To hand over to the Buyer adjuncts and relevant documents related to the Goods.</p> <p>3.4.10 To compensate the latter damages caused to the Buyer upon termination of this Contract as specified in Clause 3.1.7 hereof.</p> <p>3.4.11 To inform the Customer prior written notice in case of initiating liquidation or insolvency process during validity of this contract performance (advance payment) security.</p>
<p>4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</p> <p>4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 542 515 (հինգ հարյուր քառասուներկու</p>	<p>4. Price of the Goods and the payment procedure</p> <p>4.1 Total price of the Goods to be delivered by the Seller under this Contract comprises 542 515</p>

3. OKT. 2015


հազար հինգ հարյուր տասնհինգ) եվրո, որը չի կարող գերազանցել 289 746 411,2 (երկու հարյուր ութսունինը միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամը: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, բացառությամբ ավելացված արժեքի հարկի և մաքսային ձևակերպումների հետ կապված մաքսային և այլ վճարների:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ 542 515 (հինգ հարյուր քառասուներկու հազար ինգ հարյուր տասնհինգ) եվրո, որը չի կարող գերազանցել 289 746 411,2 (երկու հարյուր ութսունինը միլիոն յոթ հարյուր քառասունվեց հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով կամ Վաճառողի ցանկությամբ՝ այլ արտարժույթով անկանխիկ՝ հիմք ընդունելով գումարի փոխանցման դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած փոխարժեքը դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, եթե սույն Պայմանագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան ֆինանսական միջոցներ են նախատեսվել:

(five hundred forty-two thousand five hundred and fifteen) EURO, which cannot be more than 289 746 411,2 (two hundred eighty-nine million and seven hundred forty-six thousand and for hundred and eleven) AMD including taxes, duties and other payments stipulated by the RA legislation, all the expenses associated to the Goods registration, as well as all other expenses implemented by the Seller except for the valued added tax(VAT), customs clearance and customs related to charges.

The price of supply of Goods is stable and the Seller has no right to require increase and the Buyer decrease of the price.

4.1.1 From the price of the Contract the Buyer shall transfer the 542 515 (five hundred forty-two thousand five hundred and fifteen) EURO, which cannot be more 289 746 411,2 (two hundred eighty-nine million seven hundred forty-six thousand for hundred and eleven) AMD into the Seller's bank account as an advance payment. The repayment of the advance payment is done through deductions(retentions) from ongoing payments made on the basis of the delivery-acceptance Certificate. For each case the amount deducted (repaid from the advance payment) shall be determined in the proportion of the amount paid against the total Contract price.

4.2The Buyer shall pay for the delivered Goods to the Seller's bank account in AMD or other foreign currency non-cash with the Seller's request taking into account the rate of the Central Bank if RA State Budget adequate financial resources are allocated for the Contract.

13.03.2015


5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար

5. Goods quality and guarantee

5.1 The Seller guarantees the quality of the delivered Goods meets the requirements of the state standards.

6. Delivery and acceptance of Goods

6.1 The Seller delivers Goods to the Buyer(Reciever) within the terms and volumes specified in the appendixes of the Contract N92.

6.2 Full or partial outcomes of the contract execution shall be accepted by signing the delivery-acceptance Certificate within the Buyer and the Seller. The fact of extradition to the Buyer is fixed by the bilateral approved document noting the date of the document.

The Seller represents 2 signed copies of the delivery-acceptance Certificate about the supplied Goods (Appendix N9 4) and the document representing the fact of delivering the Goods to the Buyer (Appendix N9 4.1), up to the end of the supplied Goods determined by the Contract.

6.3 The delivery-acceptance Certificate is signed if the supplied Goods are corresponding to the conditions of the Contract. Otherwise, full or partial outcomes of the contract execution shall not be accepted, the delivery-acceptance Certificate shall not be signed and the Buyer shall:

a) Undertake measures specified hereunder for

13.11.2015
[Signature]

Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում

such cases, for settlement of the issue;

b) Apply to the Seller liability measures determined by this Contract.

6.4 The Buyer shall submit to the Seller a copy of the signed Delivery-Acceptance Certificate or justified refusal on acceptance of the Goods, since receipt of the Certificate within three days period.

6.5 If the Buyer does not accept or does not reject the Contract results within a specified terms defined in the Clauses 6.4 of this Contract, it is considered accepted, and the Buyer provides to the Seller the delivery-acceptance Contract confirmed himself.

7. Liabilities of the Parties

7.1 The Seller shall be liable for the quality and maintenance of the terms for supply of Goods as specified under this Contract.

7.2 In case of violation of the supply terms of Goods, fine in the amount of 0, 05 (zero point zero five) per cent shall be levied from the Seller which is being calculated for each delayed calendar days against the price of the non-performed part of the Contract.

7.3 Fine and penalty determined by Clauses 7.2 and 7.4 shall be calculated and levied from the amounts payable to the Seller.

7.4 In each case of supply of Goods which do not meet Technical Specification mentioned in

13.07.2015
ՍՊԸ

Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից

Clause 1.1 of this Contract, penalty in the amount of 0,5 (zero point five) per cent of the Contract price shall be recovered from the Seller. The penalty is calculated on the portion of the Contract price for which financial resources will be allocated and an agreement will be signed during the year.

7.5 In case of non-observance of the term determined in Clause 4.2 of this Contract, fine in the amount of 0, 05(zero point zero five) per cent of the payable amount shall be calculated for each delayed calendar days against the Buyer.

7.6 In case of non-observance or improper performance of the duties which are not mentioned in the Contract, Parties are responsible for the manner prescribes by the legislation, RA.

7.7 Payment of penalties and fines shall not release the Parties from performance of their contractual obligations.

8. Force-Majeure

In case of full or partial implementation of the obligations anticipated by the present Agreement the parties shall be released from the liability if it is a consequence of force-majeure circumstance, which has aroused after concluding this Contract, and which the parties could not foresee or prevent. Such circumstances include earthquake, flood, fire, war, declaration of military and emergency situations, political troubles, strikes, stop of work of communicative means, acts of state bodies and etc., which make impossible the execution of the liabilities anticipated by the present Contract. If the force-majeure situation continues more than 3(three) months, each of the

17 OCT. 2015
[Signature]

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

